ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԴԻՄՈՒՄԸ ԵՐԵՔ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՊԱՐՈՆ Հ. Ս. ՏՐՈՒՄԵՆԻՆ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՊՐԵՄԻԵՐ-ՄԻՆԻՍՏՐ ՊԱՐՈՆ Կ. Ռ. ԷՏՏԼԻԻՆ

Հայ եկեղեցու պետերը՝ կաթողիկոսներն ու պատրիարքները, դարերի ընթացքում հայ ժողովրդի ներկայացուցիչներն են հանդիսացել պետությունների առաջ և նորա բաղձանքների ու տառապանքների, խնդիրների ու պահանջների արտահայտիչները։

Այս պատմական մոմենտին, երբ դեմոկրատ և ազատասեր մեծ պետությունները՝ Սովետների Միությունը, Մեծ Բրիտանիան և Միացյալ Նահանգները հաղթանակ տարան չարի և բռնության՝ ֆաշիզմի և նացիզմի վերա, երբ լուծվում են ժողովուրդների գոյության հարցերը, Թյուրքիայից վտարված և ամբողջ աշխարհում թափառող հայ ժողովուրդը ամենայն իրավունքով դնում է իր արյունոտ հարցը մեծ պետությունների արդարադատության առաջ։

Մենք՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ, հավատարիմ մեր ժողովրդապաշտպան տրադիցիաներին՝ սրբազան պարտք ունինք ի սփյուռս աշխարհի ցրված, դրժբախտ հայ ժողովրդի դատը ներկայացնելու Ձեզ, խնդրելով նորա արդար լուծումը. մանավանդ թե այդ իմաստով բազմաթիվ դիմումներ ենք ստացել աշխարհի ամեն կողմը ցրված հայերի կողմից։ Հայ հին ժողովուրդը դարերի ընթացքում օսմանյան պետության լծի տակ հանդուրժել է բոլոր զրկանքներին, հարստահարություններին և ծանր տաժանքներին, ենթարկվել է իրավազուրկ ռայայի—ստրուկի դրության, սակայն պահել է, իսլամական ֆանատիկ միջավայրում, իր քրիստոնեական կրոնը, կրթվել է նորա խաղաղասեր ոգով, պահպանել է իր լեզուն և հավատացել ազատության, որ պիտի բերեին քրիստոնյա պետությունները և քաղաքակրթությունը։ Եվ երբ այդ հույսը հետզհետե իրականանում էր բալկանյան բախտակից ժողովուրդների նկատմամբ ու նոքա ազատվում էին թուրքական լծից, հայ ժողովրդի համար այդ դարձավ ճակատագրական աղետ և այն՝ մահաբեր։ Ինչպես հայտնի է, հայկական բարենորոգումների խնդիրը առաջին անգամ քաղաքական ասպարեզ իջավ Սան-Ստեֆանոյի դաշնագրությամբ 1878-ին։ Հայկական վիլայեթների ծանր կացությունը, անվերջանալի կեղեքումները և ավազակությունները, հայերի կյանքի ու գույքի անապահովությունը ստիպեցին Կ. Պոլսի հայոց Պատրիարքին դիմել հաղթական ռուսներին, որ Թյուրքիայի հետ խաղաղություն կնքելիս նկատի ունենան հայերի դժոխային վիճակը։ Ռուսներն ընդառաջ եկան, բայց Սան-Ստեֆանոյի 16-րդ բարենպաստ հոդվածը Բեռլինում վերածվեց 61-րդ աղետաբեր հոդվածին։

Սուլթան Աբդուլ Համիդը օգտվելով եվրոպական մեծ պետությունների հակամարտությունից և շահամոլությունից, փոխանակ իրագործելու իր հանձն առած բարենորոգումները, սկսեց սիստեմատիկ կերպով գործադրել իր դիվական ծրագիրը՝ ոչնչացնել հայերին, համարելով այն հայկական հարցը ջնջելու լավագույն միջոցը։ Եվ հիրավի կազմակերպած ավազակային բանդաների միջոցով մասնակի ջարդերով, կողոպուտներով, հրդեհումներով և 1894—1896 թվերին մասսայական ջարդերով նրան հաջողվեց ավելի քան 300.000 հայեր սպանել և վտարել երկրից դուրս։

Սուլթանին հաջորդող ռեժիմները՝ Իթթիհատը, Թալաաթ և Էնվեր փաշաները և քեմալական նոր Թյուրքիան Համիդի այդ «քաղաքական իմաստությունը» հասցրին իր գագաթնակետին։ Առաջին իմպերիալիստական պատերազմի նախօրյակին Թյուրքիայում ապրող 2.500.000 հայերից այսօր Թյուրքիայում կան մոտավորապես 100.000 հայեր, որոնք քաշ են տալիս իրենց ողբալի գոյությունը «դեմոկրատիկ» նոր Թյուրքիայում։

Ավելի քան մի միլիոն հայեր ոչնչացան զարհուրելի կոտորածների մեջ։ Թյուրքերը Բալկանյան ազատագրված ժողովուրդների դեմ ունեցած վրեժը անպաշտպան հայերից հանեցին։

Մենք չենք ցանկանում կանգ առնել այս անսահման տրագեդիայի վրա։ բազմաթիվ հատորներ կան գրված բոլոր լեզուներով այդ զարհուրանքների մասին, պետությունների արխիվները լիքն են իրենց կոնսուլների զեկուցումներով այդ մասին։ Մարդկության լավագույն մասը՝ ազնիվ սիրտ ու միտք կրողները բողոքեցին և ըմբոստացան մարդկային արժանապատվությունը վիրավորող այդ հրեշային ոճիրի դեմ։ Եվ սակայն հայ ժողովուրդը իր սրբազան հայրենիքից վտարված ու անպաշտպան, ցրվեց ի սփյուռս աշխարհի։

Ի լրումն հայ ժողովրդի գլխին եկած դժբախտությունների, Թյուրքերը 1920 թվին ուխտադրուժ կերպով հարձակվեցին ու խլեցին Հայաստանի կարևոր կենսական մասերը՝ Ղարսը, Արդահանը, Սուրմալուն։ Սովետական նորածին Միությունը ազատեց հայկական պատմական հողերի մի փոքր մասը, որով փրկեց նա այնտեղ ապրող հայերին վերահաս բնաջնջումից։ Այսպիսով ստեղծվեցավ Հայկական Սովետական Ռեսպուբլիկան, որը 25 տարուց ի վեր խաղաղության և ազատության մեջ բուժելով իր վերքերը զարգանում և բարգավաճում է։

Այսօր ժողովուրդների բախտը միացյալ դեմոկրատիկ պետությունների ձեռքումն է։ Այս արյունահեղ պատերազմից հետո, ուր միլիոնավոր կյանքեր զոհվեցին արդարության և հումանիզմի հաղթանակի համար, մեծ և հզոր պետությունների անխուսափելի պարտականությունն է, որ մարեն չարի և բռնության բոլոր օջախները, որպեսզի նորից չկրկնվեն ժողովուրդների ջարդերը. նրանց պարտքն է վերացնել անցյալ անարդարությունները, ճիշտ ճանաչել թշնամուն և բարեկամին, և հատուցանել ազնիվ և պարտաճանաչ զրկվածին, զոհվածին, անիրավվածին։

Այս հավատով Ձեզ են դիմում Թյուրքիայից վտարված հին ու նոր հայ գաղթականները, որոնք թափառում են երկրագնդի զանազան մասերում և նոցա հետ Ամենայն Հայոց հինավուրց Հայրապետությունը և խնդրում Ձեզ ճանաչել հայերի իրավունքը իրենց պատմական հայրենիքի վրա, որ նոքա սրբագործել են իրենց արյունով և քրտինքով և ծածկել հիշատակաց արժանի հարուստ կուլտուրական կոթողներով։ Մենք խնդրում ենք առնել Թյուրքիայի ձեռքից այդ բռնագրավված և այժմ համարյա ամայացած հողերը և վերադարձնել իրենց իսկական տերերին ու միացնել Սովետական Հայաստանին, որով նոքա հնարավորություն կունենան խաղաղ ապրելու իրենց եղբայրակիցների կողքին, աշխատելու և իրենց ազգային մշակույթը զարգացնելու։

Սա կլինի արդար գնահատականը այն հսկայական զոհաբերությունների և անձնազոհության, որ հայ ժողովուրդը բերեց հանուն միավորյալ դեմոկրատիկ պետությունների գործին, հանուն դեմոկրատիայի հաղթանակի։

Հայ ժողովուրդը բոլոր ճակատներում քաջությամբ կռվեց հաղթանակի համար, ուստի անիրավություն կլինի, եթե այս անգամ էլ նա հուսախաբ լինի։ Աշխարհը աններելի կհամարե, եթե այս անգամ էլ հայերի սրբազան իրավունքը չհարգվի։

Թյուրքիայի դաժան լծից ազատվեցին Հունաստանն ու Սերբիան, Ռումինիան, Բուլղարիան, Լիբանանն ու Ալբանիան, Կրետե կղզին ու Պաղեստինը։ Ինչո՞ւ համար, ի՞նչ իմաստուն պատճառաբանությամբ մարդկությունը պիտի զլանա տառապյալ Հայաստանին տալու իր արդարագույն իրավունքը։

Պետությունները հանուն իրենց հանդիսավոր խոստումների և հայտարարած սկզբունքների պարտավոր են կատարել քաղաքակրթական մի վեհ ակտ, մարդասիրական մի սուրբ գործ՝ փրկել վերջնական կորստից մի հին կուլտուրական ազգի մնացորդները, մի ազգի, որ ստեղծել է կլասիկ լեզու և գրականություն, տվել է արվեստի հոյակապ կոթողներ և ունի արժեքավոր ներդրումներ համամարդկային կուլտուրայի մեջ։

Թյուրքիան և նորա բարեկամները վիժեցնելու համար հայկական դատը հայտարարում են, թե ներկա Թյուրքիան դեմոկրատիկ իրավակարգ ունի, նա հին Թյուր-

քիան չէ, և հայերը, եթե կամենան, կարող են վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը։ Սակայն հայ ժողովուրդը անցյալի անթիվ փորձերից գիտե, որ գոյություն չունի հին և նոր Թյուրքիա, նա միևնույն Թյուրքիան է, և հայ ժողովուրդը, ինչպես և եվրոպական դիպլոմատիան, լավ գիտեն թյուրքական խոստումների արժեքը։

Միակ ելքն է Թյուրքա-Հայաստանի ազատագրումը և կցումը Սովետական Հայաստանին։

Ուստի վերստին խնդրում ենք, որ Թյուրքիայի հայկական վիլայեթները միացվեն Սովետական Հայաստանին, որպեսզի հայությունը ամբողջանա հավաքվելով հայրենի երկրում և ապահովության ու խաղաղության մեջ շարունակե իր ընդհատված քաղաքակրթական աշխատանքը և ի հայտ բերե իր անուրանալի ստեղծագործական պոտենցիալը։

Այս արդար ու վսեմ գործի հաջողության համար աղերսանոք դիմում եմ Ամենակարող Աստծու օգնությանը. թող Բարձրյալն օրհնե Ձեզ և առաջնորդե Ձեր միտքն ու կամքը բարին կատարելու, այլև շարժե ներկա Թյուրքիայի ղեկավարների խիղճը, քավելու իրենց և նախորդների ծանր հանցանքները, որպեսզի վերանա այն ամենամեծ անարդարությունը, որ կատարվեց լուսավորության և քաղաքակրթության դարում մի ըստ ամենայնի խաղաղ, ջանասեր և ստեղծագործող ժողովրդի հանդեպ։

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԳԵՎՈՐԳ Զ

27—11—45 թ.
Ս. Էջմիածին